ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380255

№ 11/21/5577-12
10.09.2012թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
ՀԿ-ի իրավաբան
պարոն Գ. Հայրապետյանին

Հարգելի պարոն Հայրապետյան

Ի պատասխան Ձեր 04.09.2012թ. թիվ 179-ի 4 գրության հայտնում եմ, որ ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնական հանդիպումների ժամանակ տրվող հյուրասիրությունների համար ՀՀ արդարադատության նախարարության և «ՈՒՆիվերսամ Ավան» ՍՊԸ-ի միջև «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման համաձայն ԲԸԱՀ գնման ձևով ամբողջ տարվա համար կնքվել է պայմանագիր: 2012 թվականի կարիքների համար ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնական հանդիպումների ժամանակ տրվող հյուրասիրությունների համար «Ներկայացուցչական ծախսեր» հոդվածով նախատեսված է 1500000 ՀՀ դրամ գումար, որով ձեռք են բերվում գազավորված և չգազավորված ոչ ոգելից խմիչքներ, տարբեր տեսակի սուրճ, թեյ, շաքարավազ և հյութեր: ՈՒտեստներ և խմիչքներ ձեռք չեն բերվում:

2012թ. հունվարից մինչ օրս բյուջեով նախատեսված գումարից ծախսվել է մոտ 1050000 ՀՀ դրամ:

Հարգանքով՝

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ